ԲՅՈՒԼԵՏԵՆ

Հոկտեմբեր 2024թ.

ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԵՐ

Հոկտեմբերին գումարվել է Պալատի խորհրդի 2 նիստ՝ **16.10.2024թ.ին և 31.10.2024թ.-ին: 16.10.2024թ**. նիստի օրակարգում ընդգրկված էր 6 հարց: Քննարկման արդյունքում հաստատվել են Պալատին անդամակցելու համար դիմած 3 ֆիզիկական անձանց Պալատի անդամ ընդունելու, 13 անձանց Պալատի աուդիտորի և փորձագետ հաշվապահի որակավորում շնորհելու, Պալատի խորհրդի 31 .03. 2021թ. N 15-Լ որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին որոշումները:

31.10.2024թ. նիստի օրակարգում ընդգրկված էր 8 հարց: Քննարկման արդյունքում հաստատվել են Պալատին անդամակցելու համար դիմած 6 ֆիզիկական անձանց Պալատի անդամ ընդունելու, դիմումի համաձայն մեկ անդամի անդամակցությունը դադարեցնելու, 8 անձանց Պալատի փորձագետ հաշվապահի որակավորում շնորհելու մասին որոշումները:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ՆԻՍՏԵՐ

Անդամակցության հանձնաժողով

Հանձնաժողովը գումարել է 1 նիստ՝ 17.10.2024թ.-ին, որում որոշել է առաջարկել Պալատի խորհրդին հաստատել 6 անձանց անդամակցությունը Պալատին և ընդունվել է որոշում Պալատի 15 անդամների կողմից ՇՄԶ պահանջների չպահպանումը հարգելի համարվելու վերաբերյալ:

Որակավորման հանձնաժողով

Որակավորման հանձնաժողովը գումարել է 3 նիստ՝ 15.10.2024թ.-ին, 22. 10.2024թ.-ին և 29.10.2024թ.-ին, որոնցում որոշել է առաջարկել Պալատի խորհրդին փորձագետ հաշվապահի որակավորում շնորհել 21 անձանց և հավանություն է տվել որոշակի դասընթացներ ՇՄԶ ճանաչելուն:

ՇՄԶ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ

08.10.2024թ.-ին տեղի է ունեցել «Աշխարհը 2050-ին. տնտեսական զարգացումներ և հեռանկարներ» թեմայով դասընթացը: Այն վարում էր Դավիթ Անանյանը:
22.10.2024թ.-ին տեղի է ունեցել «Ֆիզիկական անձանց տարեկան եկամուտների հայտարարագրման մեխանիզմներ, օտարերկրացիների առանձնահատկություններ, ներառյալ իրավական՝ միգրացիոն հարցեր» թեմայով դասընթացը: Այն վարում էին Հասմիկ Կարապետյանը, Անահիտ Սարգսյանը և Նարինե Նուրոյանը:
28.10.2024թ.-ին տեղի է ունեցել «Աշխատանքային պայմանագրի կնքումը էլեկտրոնային թվային համակարգով» թեմայով դասընթացը: Այն վարում էր Ժորա Սարգսյանը:
31.10.2024թ.-ին տեղի է ունեցել «Հասույթի աուդիտի առանձնահատկությունները» թեմայով դասընթացը: Այն վարում էր Էմիլ Վասիլյանը:



ՀԱՆԴԻՊՈՒՄ ACCA ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԵՏ

Ս.թ. հոկտեմբերի 14-ին Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատում տեղի ունեցավ հանդիպում Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության Որակավորված երդվյալ հաշվապահների ասոցիացիայի (ACCA) ներկայացուցիչների հետ: Հանդիպմանը մասնակցում էին Հաշվապահների և աուդիտորների եվրասիական խմբի (ՀԱԵԽ) նախագահ, Պալատի նախագահ Թաթուլ Մովսիսյանը, Պալատի նախագահի տեղակալ, Որակավորման հանձնաժողովի նախագահ Արթուր Հարությունյանը, Պալատի գործադիր տնօրեն Հայկ Մնացականյանը, Կենտրոնական Ասիայի, Մոնղոլիայի և Հայաստանի գծով ACCA ղեկավար Ժաննա Իսկենովան, ACCA կրթական և բիզնես կապերի ղեկավար Ժուլդիզ Ժարմագամբետը, ACCA բիզնեսի զարգացման ղեկավար Բեգայիմ Օրմուշեվան: Հանդիպման ընթացքում քննարկվեցին Պալատի և ACCA միջև համագործակցության ներկա վիճակը, զարգացման հեռանկարները՝ ինչպես կրթության, ACCA քննություններից ազատումների համար վճարների զեղչերի տրամադրման և այլ հարցերում, այնպես էլ ՀՄԴ անդամակցության գործընթացում: